ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «26» հունվար 2008թ.

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, հետագայում ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ի դեմս տնօրեն Աստղիկ Ստեփանյանի մի կողմից, և քաղաքացիներ Վաչագան Հովհաննիսյանը, Վաչագան Սարգսյանը և Ռոբերտ Հովսեփյանը, հետագայում ՀԵՂԻՆԱԿՆԵՐ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ հանձնում են ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ իրենց հեղինակած 12-ամյա դպրոցի 1-ին դասարանի «Մաթեմատիկա» դասագրքի (հետագայում ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ) 1-ին և 2-րդ մասերի հրատարակման, տպագրման և իրացման բացառիկ իրավունքը՝ պայմանագրի ստորագրման օրից 10 (տասը) տարի ժամկետով:

2. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ պարտավորվում են ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ ներկայացնել պատշաճ տեսքով՝ վերջինիս կողմից ծանուցում ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

3. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ երաշխավորում են ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ, որ երրորդ անձանց իրավունքներն իրենց կողմից չեն խախտվել:

4. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ պարտավորվում են սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում սույն պայմանագրի 1-ին կետում նշված ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ կամ դրա մասը նույն լեզվով հրատարակելու իրավունքը չփոխանցել այլ հրատարակչական կազմակերպության՝ առանց այդ մասին ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ գրավոր համաձայնության:

5. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է ուսումնասիրել ներկայացված ձեռագիրը 30-օրյա ժամկետում, իրեն իրավունք վերապահելով նշված ժամկետը երկարաձգել 4-ական օր՝ յուրաքանչյուր հեղինակային թերթի համար: Արդյունքների մասին ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ տեղեկացվում է գրավոր: Եթե գրավոր ծանուցումը չի ուղարկվում ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ սահմանված ժամկետում, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ համարվում է հավանություն ստացած:

6. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ իրավունք չունի առանց ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ համաձայնության որևէ փոփոխություն կատարել ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ կամ դրա անվան մեջ կամ փոխել ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ անունները:

7. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է չխախտել ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ անձնական իրավունքները, այն է՝ անվան իրավունքը, անձեռնմխելիության իրավունքը, կեղծանունով հրատարակելու իրավունքը:

8. ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ իրավունք ունեն, ինչպես նաև պարտավոր են ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ պահանջով, առանց լրացուցիչ վճարումների ուղղումներ կատարել ձեռագրում և վերադարձնել տեքստը ամբողջությամբ:

9. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է դասագրքերից յուրաքանչյուրի համար ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ վարձատրել՝ ըստ ՀՀ ԿԳՆ կողմից պատվիրած տպաքանակների, այդ մասին նրանց հետ կնքելով լրացուցիչ պայմանագիր: Վճարվելիք հոնորարը կկազմի իրացված գրքերի գնի 5%-ը՝ հրատարակման և յուրաքանչյուր վերահրատարակման համար:

10. Հոնորարից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերն ու պահումները կատարվում են ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ կողմից:

11. ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ իրավունք ունեն ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ անվճար ստանալ 6 (վեց) օրինակ հեղինակային գիրք:

12. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ իրավասու է միակողմանի լուծել պայմանագիրը, եթե

- ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ 2-րդ կետով պայմանավորված ժամկետում չեն ներկայացնում ձեռագիրը,
- ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ խախտում են 3-րդ կետով նախատեսված պայմանները,
- առկա է գրագողության փաստը:

13. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ապահովում է ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ յուրաքանչյուր հրատարակված օրինակի վրա հեղինակային իրավունքի մասին ծանուցող նշանի տեղադրումը ©, հեղինակների անվան և առաջին հրատարակության տարեթվի նշումը:

14. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ իրավասու է ամբողջությամբ կամ մասամբ սույն պայմանագրով նախատեսված իրավունքները փոխանցել այլ անձանց՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ:

15. Պայմանագիրը գործում է 10 (տասը) տարի ժամկետով կնքման պահից սկսած:

16. Վեճեր առաջանալու դեպքում հարցը կարգավորվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ,
Երևան-9, Տերյան-91,
Հ/Հ 163038104309 ՀԷԿԲ
Մյասնիկյան բաժանմունք

ՏՆՕՐԵՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Երևան-10, Ագաթանգեղոսի 7, բն. 66,
Անձնագիր՝ AA 0434923,
տրվ. 011-ի կողմից 28.06.1996թ.
☎ 52-44-48

Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևան, 16 թաղամաս, 30 շենք, բն. 12,
Անձնագիր՝ AB 0513115,
տրվ. 012-ի կողմից, 25.10.1997թ.
☎ 35-72-85

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Երևան, Ամիրյան 18, բն. 58,
Անձնագիր՝ AF 0638837,
տրված՝ 011-ի կողմից, 27.02.2003թ.

Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective management organization of copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

No- 07/ 116
20.04.2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱԲԵԹ ԴԱՎԹԻ
«ԱՐԵՎԻԿ» հրատարակչության տնօրեն
ք. Երևան, Տերյան 91
հեռ. 52-45-61
անձնագիր 0033405354, 011,15.04.2014թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ «ԱՐԵՎԻԿ» հրատարակչության կողմից ներկայացված՝

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ , ԱՌԱԿՆԵՐ, ՀԵՔԻԱԹՆԵՐ»
/ հեղինակ՝ Խնկո-Ապեր/

անվանումով գիրքը ի պահ է վերցված կազմակերպությունում 2017թ. ապրիլի 19 -ին **N 08/ 4126** թվի ներքո:

Գրքի մեկ օրինակը պահվում է կազմակերպությունում:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ. 52 73.50, Հեռ/Ֆաքս. 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел. +374 1 52 73 50 Факс: +374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 73 50 Tel/ Fax: + 374 1 52 94 92
E-mail: info@armauthor.am